Ան կաշկանդի արդէն, թող չասենք, որ ժամանակաւոր նեղութիւններէն աւելի ծանր ժողովուրդին անտարբերութեան ներքև ընկճի, խորտակելով, իր հետ, այնքան յոյսերով շինուած կրթական գեղեցիկ ձեռնարկները։ Ատիկա անարգանք մը պիտի ըլլար հայ անունին։

Կրնա՞նք յուսալ ուրեմն, որ հայ կրթութեան և հայ մտաւոր վերածնութեան նուիրուած այդ մեծ հաստատութեան մէկ պաշտօնեան, հեռաւոր Կիլիկիոյ ափերէն ուղղած մեր այս անձնական կոչը անարձագանգ պիտի չմնայ Կովկասի մերայնոց առատաբուխ զգացմանց մէջ։ Կովկասը, ուր աներկբայ ենք, թէ հարիւրաւոր Թիւրքահայեր կան՝ ամենքն ալ ուղղակի թէ անուղղակի օգտուած այդ մաքուր հայ ընկերութեանց ծառայութիւններէն, պիտի չուզե՞ն արդեօք, իւրաքանչիւրը գէթ մէկ-մէկ ուրիշ համակիրներ ևս գտնել հոն, իրենց հիւրընկալ այդ երկրին ամեն ծայրը, առնելով Միացեալին բերելու եղբայրական հասկցուած օգնութեան լումաները, որոնցմով ան կարող ըլլայ յառաջ տանիլ համազգային վստահութեամբ ստանձնած այն վեհ միսիան, երկրին հեռաւոր և լքուած ամեն անկեանց մէջ, առանց որուն անոնք դատապարտուած պիտի ըլլան կորսուելու հայութեան համար...

Կրնա՞նք յուսալ, թէ «Մշակի» հեղինակաւոր էջերէն այս կոչը՝ զօրացած երկրին կրթական ռուսահայ բարեկամներուն համակիր շունչովը՝ «ձայն բարբառոյ յանապատի» չպիտի մնայ։ Միք. Նաթանեան

Մերսին

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՑԵԱԼ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ.

Տեղական լրագիրները, մանաւանդ «Закавказье» թերթը, մի քանի անճիշդ տեղեկութիւններ հաղորդված լինելով հայկական գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի միացեալ յոբելեանի մասին, հարկաւոր ենք համարում հաղորդել հետևեալ ճիշդ տեղեկութիւնները։

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում անցեալ տարի Հայոց Հրատ. Ընկերութեան նախաձեռնութեամբ կազմվեց հայկական տպագրութեան 400-ամեակի յոբելեանը տօնելու համար մի յանձնաժողով, նախագահութեամբ Լէօի և բժ. Ա. Զարգարեանի։ Երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրատարակեց մի ծրագիր, որով առաջարկվում էր տօնել ոչ միայն տպագրութեան 400-ամեակը, այլ և հայ գրերի գիւտի 1500-ամեակը և այդ միացեալ յոբելեանը իբրև համազգային տօնել Էջմիածնում հոկտ. 13-ին, Թարգմանչաց յիշատակութեան օրը, Թիֆլիսի յանձնաժողովը որոշեց տօնել տպագրութեան 400-ամեակը Թիֆլիսում, նոյեմբ. 26-ին, և հիմնել «գրական ֆօնդ»։ Ահա այդ միջոցին, հոկտեմբերի սկիզբները, Թիֆլիսի հայ հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչներից կայացաւ մի մեծ ժողով, որ ընտրեց մի նոր յոբելեանական մասնաժողով, բաղկացած 40 հոգուց, և ընդունեց գործունէութեան ծրագիր Էջմիածնի յայտարարած ծրագիրը։ Իսկ այդ ծրագրով, ինչպէս յայտնի է, համազգային միացեալ յոբելեանը պէտք է կատարվէր երկու անգամ, առաջին անգամ 1912 թ. հոկտ. 13-ին, իբրև նախատօնակ, իսկ երկրորդ անգամ, այս 1913 թ. հոկտ. 12-ին, իբրև փակումն յոբելեանական հանդէսների, որոնք պէտք է տեղի ունենային մի ամբողջ տարվայ ընթացքում, իսկ իբրև յաւերժացման ակտ, պէտք է հիմնվի «դպրոցական ֆօնդ»։ Այդ ծրագրի առաջին մասը ճշդութեամբ կատարվեց, այն է յոբելեանի նախատօնակը կատարվեց Էջմիածնում մեծ շուքով և հանդէսով Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, մասնակցութեամբ զանազան պատգամաւորների՝ Ռուսաստանից, Թիւրքիայից, Եգիպտոսից և այլն. կատարվեցին դպրոցական և այլ հանդէսներ զանազան քաղաքներում և երկիրներում. ձեռք բերվեց դպրոցական ֆօնդի համար հանգանակութեան իրաւունք ամբողջ Ռուսաստանի հայերի մէջ և այլն։ Մնում է ուրեմն իրագործել դպրոցական ֆօնդի որոշումը և պատրաստութիւններ տեսնել հոկտ. 12-ի մեծ տօնախմբութեան համար։ Եւ ահա երբ այդ նպատակին ձեռնարկեց Թիֆլիսի վերջին մասնաժողովը, որ գործում է նախագահութեամբ Հ. Առաքելեանի և որն ընդունել է Էջմիածնի ծրագիրը, Մեսրոպ եպիսկոպոսի կողմից առաջարկ եղաւ միանալ և միասին գործել։ Թիֆլիսի մասնաժողովը, գումարելով նիստ, որոշեց ընդունել այդ գեղեցիկ առաջարկը, պայմանով՝ որ Լէօի և Զարգարեանի նախագահութեամբ գործող մասնաժողովը ընդունէ նոյնպէս Էջմիածնի յայտարարած ծրագիրը, իբրև միութեան conditio sine qua non. Եւ ահա առաջիկայ երեքշաբթի կամ չորեքշաբթի առաջնորդարանում կայանալու է երկու մարմինների ժողովը Մեսրոպ եպիսկոպոսի նախագահութեամբ. այդ ժողովը կընտրէ մի գործադիր մարմին, բաղկացած երկու մարմինների առաջարկած անդամներից, հաւասար թւով, և այդ գործադիր մարմինը կը սկսէ գործել։ Յոյս կայ, որ միութիւնը կայանայ յիշեալ հիմունքով։

### ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Ղարաբաղի թեմի կառավարիչ Զաւէն վարդապետը ներկայումս Թիֆլիսումն է գտնվում։ Նա եկել է Ղարաբաղի թեմական դպրոցի 75-ամեայ յոբելեանի և այդ դպրոցի պահպանութեան խնդիրների մասին հոգ տանելու։ Բացի կենտրոնական յոբելեանական յանձնաժողովից, որ կազմված է Շուշում, յանձնաժողովներ կազմված են նաև Թիֆլիսում և Բագւում։ Թիֆլիսի յանձնաժողովի անդամներն են շուշեցիներ Դաւիթ Աւան-Իւզբաշեան, Մարկոս Դոլուխանեան, Միքայէլ Արամեանց, Սարգիս Կաֆեան, Մ. Իւզբաշեան, Յովսէփ Խունունց, Հ. Առաքելեան, Տ. Նազարեան և Ա. Բաբախանեան։

Այդ յանձնաժողովը նիստ գումարեց առաջնորդարանում մասնակցութեամբ Մեսրոպ եպիսկոպոսի և Զաւէն վարդապետի։ Շուտով Թիֆլիս կը գայ և մօսկվաբնակ շուշեցի Բաղդասար Արղումանեանցը, որ խոստացել է իր ծախքով կառուցանել թեմական դպրոցը։ Յոյս կայ, որ կարելի լինի նրա հետ համաձայնութեան գալ։ Շուշու կենտրոնական Յոբել. Յանձնաժողովը և դպրոցի հոգաբարձութիւնը նշանակել է մի առանձին պատգամաւորութիւն, բաղկացած թեմի կառավարիչ Զաւէն վարդապետից, Հ. Առաքելեանից, Տ. Նազարեանից և Մովսէս Իւզբաշեանից՝ գնալու Էջմիածին և ներկայանալու Վեհ. Կաթողիկոսին ու խնդրելու կարգադրութիւն մի քանի հարցերի լուծման համար։

### ՈՐՈՇՈՒՄՆ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ՍԻՆԴԻԿԱՏԻ ՄԱՍԻՆ

Այն սոսկալի գները, որ վերջին ժամա-

---

փէյ Իվանիչը ուշքի գալով, զգաստանալով պահանջել է կանչել իր մօտ իր խումբը՝ խոստովանահօրը և նօտարին։ Կատարելով իր

ուցանելով նրանց համար ապաստարաններ, անկելանոցներ, հիւանդանոցներ, աշխատանքի տներ և դպրոցներ»։